ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՐԱՄԱՆ

Ք.ԵՐԵՎԱՆ № 127-Ա «23» 11 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 26-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կանոնադրության III մասի 13-րդ կետի «դ» ենթակետի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության մամուլի քարտուղար՝ Մարգարիտա Բորիսի Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«____»_____ 20 թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (37411) 501 150, ֆաքս՝ (37411) 529 753

№ _____

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի
նախագահ տիկին Լիանա Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի 21.11.2016թ. թիվ 311-ի 2 գրությամբ ներկայացված հարցադրումների, տեղեկացնում ենք.

1. Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունում Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել Վարչության մամուլի քարտուղար Մարգարիտա Սարգսյանը:
2. Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը տեղակայված է Վարչության պաշտոնական spm.am կայքում (հղումը՝http://spm.am/am/contacts/)
3. Կից ներկայացվում է Տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման վերաբերյալ Վարչության պետի հրամանի պատճենը:

Հարգանքով՝

Վ. Հարությունյան

Կատ. Մ. Սարգսյան
Մամուլի քարտուղար
011566242